**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/32995-2019

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Խ-192-14.06.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Խ-192-14.06.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով առաջարկվում է նախատեսել կարգավորում, որի համաձայն՝ ոստիկանության պետի և ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոնները հանվում են ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների պաշտոնների անվանացանկերից՝ ներառվելով քաղաքական պաշտոնների անվանացանկում, և վերջիններիս վրա տարածվում են պատգամավորի թեկնածուին ներկայացվող պահանջները:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ պետության ղեկավարը կաշկանդված է գործող կարգավորումներով կարևոր ուժային կառույցների ղեկավարներին նշանակելու նույն համակարգում ծառայություն անցած անձանց շրջանակից, ինչը բացարձակապես անընդունելի կարգավորում է:

Այդ համատեքստում անհրաժեշտ ենք համարում դիտարկել հետևյալ իրավական կարգավորումները: Այսպես՝

«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

«Ազգային անվտանգության մարմինների գործունեությունը հիմնված է օրինականության, ժողովրդավարության, օրենքի առաջ բոլորի հավասարության, մարդու և քա-

ղաքացու իրավունքներն ու ազատությունները հարգելու և պահպանելու, կուսակ-ցությունների ու հասարակական միավորումների գործունեությունից անկախության (...) սկզբունքների հիման վրա»:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝

«1. Ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը զինվորական ծառայություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

2. Ազգային անվտանգության մարմիններում ծառայությունն իրականացվում է (...) հասարակական միավորումների գործունեությունից անկախության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա և կենտրոնացված ղեկավարման միջոցով (...)»:

Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պետական լիազոր մարմնի ղեկավար կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ առնվազն 3 տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:»:

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ոստիկանությունը պաշտպանում է մարդու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև օրինական շահերը՝ անկախ (...) նրա քաղաքական կամ այլ հայացքներից, (...)»:

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոստիկանության պետ կարող է նշանակվել ոստիկանության այն ծառայողը, որը մինչև նշանակումն զբաղեցրել է ոստիկանության բարձրագույն կամ առնվազն 3 տարի գլխավոր խմբի պաշտոն և ունի ոստիկանության գնդապետից ոչ ցածր ոստիկանության կոչում:»:

Այս առումով՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին առնչվող որոշ կարգավորումների: Այսպես՝

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:»:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն օժտված է քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար:»:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական պաշտոնը հանրային իշխանության մարմիններում նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար:»:

Շարադրված հոդվածների բովանդակային և համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ նախագծերով նախատեսված կարգավորումների պարագայում խախտվում է տվյալ հասարակական հարաբերությունների կարգավորման իրավական նորմերի ներդաշնակությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում խնդրահարույց է նշված ծառայությունների՝ հասարակական միավորումներից ու կուսակցություններից անկախ գործունեությունն այն պարագայում, երբ այն ղեկավարվում է քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից:

Բացի դրանից, հարկ է նշել, որ նախագծերով նախատեսված կարգավորումների պարագայում ոստիկանության պետը և ազգային անվտանգության ծառայության տնօրենն առավելապես կաշկանդված են լինելու քաղաքական գործընթացներով, քաղաքական մեծամասնության դիրքորոշումներով և քաղաքական ուժի վարած քաղաքականությամբ: Մինչդեռ գտնում ենք, որ նշված ծառայությունները՝ ի դեմս իրենց ղեկավարների, չեն կարող ու չպետք է զբաղվեն քաղաքականությամբ, նրանք պետք է զերծ մնան քաղա-

քական զարգացումներից և, անկախ քաղաքական իրավիճակից, անաչառորեն կատարեն իրենց առջև դրված խնդիրները և գործառույթները:

Այս առումով՝ անհրաժեշտ է կարևորել նաև այն առանձնահատկությունները, որոնք ընդգծել է օրենսդիրը՝ վարչական և քաղաքական պաշտոնների եզրույթները սահմանելիս: Մասնավորապես, եթե քաղաքական պաշտոն զբաղեցնող անձն օժտված է քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար, ապա վարչական պաշտոն զբաղեցնող անձն ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը և պատասխանատվություն է կրում իր պաշտոնից բխող նպատակների, տվյալ դեպքում՝ ազգային անվտանգության և ոստիկանության բնագավառներում պետության կողմից վարած քաղաքականության, վերջիններիս առջև դրված խնդիրների իրականացման համար:

Ինչ վերաբերում է նախագծի հեղինակների կողմից վկայակոչված այն փաստարկներին, որ գործող կարգավորումների պարագայում անընդունելի է այն, որ պետության ղեկավարը կաշկանդված է ուժային կառույցների ղեկավարներին նշանակելու նույն համակարգում ծառայության անցած անձանց շրջանակից, գտնում ենք, որ դրանք անհիմն են, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համանման կերպով են կարգավորված նաև զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի, հարկադիր կատարումն ապահովող ծառայության, քրեակատարողական ծառայության, փրկարար ծառայության մարմինների ղեկավարներին պաշտոնների նշանակելու գործընթացները, և նշված ոլորտներում ևս Հայաստանի Հանրապետության նախագահի կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից նշանակումներն իրականացվում են՝ որոշակի օրենսդրական սահմանափակումներին համապատասխան:

Միաժամանակ առաջարկում ենք հետագայում քննարկման առարկա դարձնել ոստիկանության պետի և ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոններին ներկայացվող պահանջների վերանայման հարցը՝ արդեն իսկ սահմանված պահանջներից, մասնավորապես, միայն տվյալ ծառայություններում զբաղեցրած պաշտոնի կամ համապատասխան կոչումի առկայությունից բացի, որպես այլընտրանքային պահանջ նախատեսելով նաև հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար ներկայացված այլ պահանջներ ևս՝ տվյալ պաշտոններում նշանակումներ կատարելիս առավել ճկունություն ապահովելու և տվյալ մարմինների՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

Ամփոփելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծերի փաթեթով քննարկվող՝ գործող օրենքների հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

16 հուլիսի 2019 թվականի N 929 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (*Խ-192-14.06.2019-ՊԻ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 16
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-192-14.06.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (ա) ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Նույն կետի (բ) ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«բ) Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) ղեկավարի տեղակալ.»:

Հոդված 2.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Պետական լիազոր մարմնի ղեկավարը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները:»:

Հոդված 3.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Խ-192[1]-14.06.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 03-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2.

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Պետական կառավարման մարմնի ղեկավարը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները:»:

Հոդված 3.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ԽՆ-192[2]-14.06.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը «եւ նրանց տեղակալների» բառերից հետո լրացնել «, ազգային անվտանգության պետական լիազոր մարմնի ղեկավարի եւ ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանմամբ՝ պետական լիազոր մարմնի

ղեկավարին (ազգային անվտանգության ծառայության տնօրենին) պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության պետին վարչապետի առաջարկությամբ նշանակում եւ ազատում է Հանրապետության նախագահը:

Ընդ որում՝ վերոնշյալ երկու օրենքներով սահմանվում է, որ՝

Ազգային անվտանգության ծառայության տնօրեն կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչեւ նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ առնվազն 3 տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն եւ ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

Ոստիկանության պետ կարող է նշանակվել ոստիկանության այն ծառայողը, որը մինչեւ նշանակումն զբաղեցրել է ոստիկանության բարձրագույն կամ առնվազն 3 տարի գլխավոր խմբի պաշտոն եւ ունի ոստիկանության գնդապետից ոչ ցածր ոստիկանության կոչում:

Փաստորեն այս կարեւոր ուժային կառույցների ղեկավարներին պետության ղեկավարը կաշկանդված է նշանակելու նույն համակարգում ծառայություն անցած անձանց շրջանակից, ինչը բացարձակապես անընդունելի կարգավորում է:

Մեր կողմից առաջարկվում է ոստիկանության պետի եւ ազգային անվտանգության տնօրենի պաշտոնները հանել համապատասխանաբար ոստիկանության պաշտոնների եւ ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնների անվանացանկերից՝ ներառելով դրանք քաղաքական պաշտոնների անվանացանկում: Եվ քանի որ այդ պաշտոններն իրենց փաստացի բնույթով համեմատական են նախարարի պաշտոնին, առաջարկվում է նրանց համար եւս կիրառել Սահմանադրության 148-րդ հոդվածի 1-ին մասի սահմանումը, որի համաձայն՝ կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները[1]:

Այսպիսով, առաջարկվում է՝

1. ազգային անվտանգության ծառայության տնօրենի եւ ոստիկանության պետի պաշտոնները համարել քաղաքական պաշտոն եւ

2. այդ պաշտոններում նշանակվող անձանց համար եւս սահմանել պատգամավորի թեկնածուին ներկայացվող պահանջները:

---

[1] Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին 4 տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին 4 տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող եւ հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: